ARLIS
ARMENIAN LEGAL INFORMATION SYSTEM

Համարը	N 530-Ն	*Տեսակը*	Հիմնական
Տիպը	Որոշում	*Կարգավիճակը*	Գործում է
Սկզբնաղբյուրը	ՀՀՊՏ 2009.05.27/27(693) Հոդ.589	*Ընդունման վայրը*	Երևան
Ընդունող մարմինը	ՀՀ կառավարություն	*Ընդունման ամսաթիվը*	14.05.2009
Ստորագրող մարմինը	ՀՀ վարչապետ	*Ստորագրման ամսաթիվը*	19.05.2009
Վավերացնող մարմինը		*Վավերացման ամսաթիվը*	
Ուժի մեջ մտնելու ամսաթիվը	06.06.2009	*Ուժը կորցնելու ամսաթիվը*	

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄԸ ԿԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐ, ԱՆՑԱՆԿԱԼԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՔԱՆԱԿՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

14 մայիսի 2009 թվականի N 530-Ն

ԿԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐ, ԱՆՑԱՆԿԱԼԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՔԱՆԱԿՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Անասնակերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել կերարտադրության նպատակով օգտագործվող օրգանական և անօրգանական թունավոր, անցանկալի նյութերի ցանկը և դրանց առավելագույն թույլատրելի քանակները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Տ. Սարգսյան**

2009 թ. մայիսի 19
Երևան

Հավելված
ՀՀ կառավարության 2009 թվականի
մայիսի 14-ի N 530-Ն որոշման

ԿԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՕՐԳԱՆԱԿԱՆ ԵՎ ԱՆՕՐԳԱՆԱԿԱՆ ԹՈՒՆԱՎՈՐ, ԱՆՑԱՆԿԱԼԻ ՆՅՈՒԹԵՐԻ ՑԱՆԿԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԱՌԱՎԵԼԱԳՈՒՅՆ ԹՈՒՅԼԱՏՐԵԼԻ ՔԱՆԱԿՆԵՐԸ

NN ը/կ	Օրգանական և անօրգանական թունավոր, անցանկալի նյութերի անվանումները	Կերատեսակը	Չափաքանակը (առավելագույն մնացորդային քանակությունը)՝ կերերում մգ/կգ 12 տոկոս խոնավության պայմաններում
1	2	3	4
1.	Արսեն	ճակնդեղից շաքարի արտադրության մնացորդներ	4
		առվույտի և երեքնուկի խոտ	4
		կերային ֆոսֆատներ	10
		ջրային կենդանիների վերամշակումից ստացվող կերեր	10
		ձկների համար նախատեսված համակցված կերեր	4
		համակցված այլ կերեր	2
		հանքային կերային հավելումներ	12
		կերային այլ հավելումներ	4
		այլ կերեր	2
2.	Կապար	կանաչ կերեր	40
		կերային ֆոսֆատներ	30
		միկրոկենսաբանական սինթեզի կերեր (խմորասնկեր)	5
		համակցված կերեր	5
		հանքային կերային հավելումներ	30
		կերային այլ հավելումներ	10

		այլ կերեր	10
3.	Ֆտոր	կենդանական ծագում ունեցող կերեր	500
		կերային ֆոսֆատներ	2000
		խոզերի համար նախատեսված համակցված կերեր	100
		այլ թռչունների համար (բացի հավի ճտերից) նախատեսված համակցված կերեր	350
		հավի ճտերի համար նախատեսված համակցված կերեր	250
		այլ համակցված կերեր	150
		կովերի, ոչխարների և այծերի համար նախատեսված հանքային խառնուրդներ	2000
		կերային այլ հավելումներ	125
		այլ կերեր	150
4.	Սնդիկ	ջրային կենդանիների վերամշակումից ստացվող կերեր	0.5
		շների և կատուների համար նախատեսված համակցված կերեր	0.4
		համակցված այլ կերեր	0.1
		կերային հավելումներ (բացառությամբ շների և կատուների համար նախատեսված կերային հավելումների)	0.2
		այլ կերեր	0.1
5.	Նիտրիտներ	ձկների կերեր	60 (արտահայտված նատրիումի նիտրատի ձևով)

		համակցված այլ կերեր (բացառությամբ տնային կենդանիների (առանց տնային թռչունների և ակվարիումային ձկների) համար նախատեսված համակցված կերերի)	15 (արտահայտված նատրիումի նիտրատի ձևով)
6.	Կադմիում	բուսական ծագում ունեցող կերեր	1
		կենդանական ծագում ունեցող կերեր (բացառությամբ տնային կենդանիների համար նախատեսված կերերի)	2
		կերային ֆոսֆատներ	10
		այծերի, ոչխարների և կովերի (բացառությամբ հորթերի, գառների և ուլերի) համար նախատեսված համակցված կերեր	1
		համակցված կերեր (բացառությամբ տնային կենդանիների համար նախատեսված կերերի)	0.5
		հանքային կերային հավելումներ	5
		կովերի, ոչխարների և այծերի համար նախատեսված կերային հավելումներ	0.5
7.	Աֆլատոքսին B_1	արմավենու պտուղ, կոկոսի ընկույզի չորացրած միջուկ, գետնընկույզ, բամբակի սերմեր, եգիպտացորեն և եգիպտացորենի վերամշակումից ստացված արտադրանք	0.02
		կթան կովերի համար նախատեսված համակցված կերեր	0.005
		հորթերի և գառների համար նախատեսված համակցված կերեր	0.01
		կովերի, ոչխարների, այծերի (բացառությամբ մատղաշ կենդանիների) համար նախատեսված համակցված կերեր	0.05
		խոզերի և թռչունների (բացառությամբ մատղաշ կենդանիների) համար նախատեսված համակցված կերեր	0.02
		համակցված այլ կերեր	0.01

		կովերի, ոչխարների և այծերի համար նախատեսված կերային հավելումներ	0.05
		կաթնատու կենդանիների, հորթերի և գառների համար նախատեսված կերային հավելումներ	0.03
		խոզերի և թռչունների (բացառությամբ մատղաշ կենդանիների) համար նախատեսված կերային հավելումներ	0.03
		կերային այլ հավելումներ	0.005
		այլ կերեր	0.05
8.	Դեզօքսինիվալենոլ (վոմիտոքսին)	եգիպտացորենի երկրորդային հումք	12
		հատիկային և հատիկաընդեղենային այլ կերեր	8
		խոզերի համար նախատեսված համակցված կերեր և կերային հավելումներ	0.9
		մինչև 4 ամսական հորթերի, գառների և ուլերի համար նախատեսված համակցված կերեր և կերային հավելումներ	2
		համակցված այլ կերեր և կերային հավելումներ	5
9.	Զեարալենոն	եգիպտացորենի երկրորդային հումք	3
		հատիկային և հատիկաընդեղենային այլ կերեր	2
		խոճկորների և երիտասարդ խոզերի (շիշակների) համար նախատեսված համակցված կերեր և կերային հավելումներ	0.1
		խոզամայրերի և բտվող խոզերի համար նախատեսված համակցված կերեր և կերային հավելումներ	0.25
		հորթերի, կթան կովերի, ոչխարների, գառների, այծերի, ուլերի համար նախատեսված համակցված կերեր և կերային հավելումներ	0.5
10.	Օխրատոքսին A	հատիկային և հատիկաընդեղենային կերեր	0.25

		խոզերի համար նախատեսված համակցված կերեր և կերային հավելումներ	0.05
		թռչունների համար նախատեսված համակցված կերեր և կերային հավելումներ	0.1
11.	Ֆումոնիզին $B_1 + B_2$	եգիպտացորեն և եգիպտացորենի երկրորդային հումք	60
		խոզերի, ձիերի, ճագարների և տնային կենդանիների համար նախատեսված համակցված կերեր և կերային հավելումներ	5
		ձկների համար նախատեսված համակցված կերեր և կերային հավելումներ	10
		թռչունների, հորթերի, մինչև չորս ամսական գառների համար նախատեսված համակցված կերեր և կերային հավելումներ	20
		մատղաշ (չորս ամսականից բարձր) որոճող կենդանիների և ջրաքիսի համար նախատեսված համակցված կերեր և կերային հավելումներ	50
12.	Էնդոսուլֆան (ալֆա, բետա իզոմերներ և էնդոսուլֆանսուլ-ֆատի գումարը՝ արտահայտված որպես էնդոսուլֆան)	եգիպտացորեն և եգիպտացորենի երկրորդային հումք	0.2
		յուղատու սերմեր և դրանց վերամշակումից ստացված արտադրանքներ	0.5
		չզտված բուսական ձեթեր	1.0
		ձկների համար նախատեսված համակցված կերեր	0.005
		այլ կերեր	0.1
13.	Թեոբրոմին	կովերի համար նախատեսված համակցված կերեր	700
		համակցված այլ կերեր	300
14.	Մանանեխային եթերայուղ	հլածուկի սերմերի քուսպ	4000 (արտահայտված որպես ալիլիզոթիոցիանատ)

		կովերի, ոչխարների և այծերի (բացառությամբ մատղաշ կենդանիների) համար նախատեսված համակցված կերեր	1000 (արտահայտված որպես ալիլիզոթիոցիանատ)
		խոզերի (բացառությամբ խոճկորների) և թռչունների համար նախատեսված համակցված կերեր	500 (արտահայտված որպես ալիլիզոթիոցիանատ)
		համակցված այլ կերեր	150 (արտահայտված որպես ալիլիզոթիոցիանատ)
		այլ կերեր	100
15.	Վինալ Թիոքսազոլիդոն (վինիլօքսազոլիդինթիոն)	ածան հավերի համար նախատեսված համակցված կերեր	500
		թռչունների (բացառությամբ ածան հավերի) համար նախատեսված համակցված կերեր	1000
16.	Աշորայի եղջերաստունկ (Claviceps purpurea)	չթեփահանված հացազգիներ պարունակող կերեր	1000
17.	Մոլախոտի սերմեր, ինչպես նաև բույսերի սերմեր, որոնք պարունակում են ալկալոիդներ, գլյուկոզիդներ կամ այլ թունավոր նյութեր՝ առանձին կամ համակցված, ներառյալ՝	տարատեսակ կերեր	3000
	1) որոմ՝ հարբեցնող (Lolium temulentum L.)		1000
	2) արջընկույզ սովորական (գարշահոտ) (Danura stramonium L.)		1000
18.	Գերչակի (տզկանեփի) սերմեր (Ricinus communis L.)	տարատեսակ կերեր	10 (գերչակի սերմերը՝ իրենց թաղանթով)
19.	Բոժոժատունկ (Crotalaria spp.)	տարատեսակ կերեր	100

20.	Ստորև նշված բուսական արտադրանքները և դրանց վերամշակման արդյունքում ստացված մնացորդները՝ 1) ծիրան (Prunus armeniaca L.) 2) դառը նուշ (Prunus dulcis (Mill.)D.A.Webb var. amara(DC.)Focke (=Prunus amygdalus Batsch var.amara(DC.) Focke) 3) եվրոպական (անտառային) հաճար (Fagus silvatica L.) 4) կամելինա (ճապոնավարդ) (Camelina sativa(L) Grantz) 5) կրոտոն տիգլիում (չինական գերչակ) (Groton tiglium) 6) յատրոֆա (բուժատունկ) (Jatropha curcas) 7) սարեպտական մանանեխ (Brassica juncea (L) Czern. And Coss. ssp. juncea var. juncea) 8) հնդկական մանանեխ (Brassica juncea (L) Czern. And Coss. ssp.intergrifolia (west) Thell) 9) չինական մանանեխ (Brassica juncea (L) Czern. And Coss. ssp. juncea var. lutea Batalin) 10) սև մանանեխ (մարձակ) (Brassica nigra(L.) Koch) 11) եթովպիական մանանեխ (Brassica carinata A. Braun)	տարատեսակ կերեր	հետքեր (քանակապես անորոշելի)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար **Դ. Սարգսյան**